Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 օգոստոս 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Նազարյանը, Ն. Ավետյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Թալինի 1 պոմպակայանի (Արագածավան բնակավայր) վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ՄԻԿԱՆ» ՍՊԸ-ն և «Ռիջիդ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի 26.08.2024 թվականի թիվ 2 որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացրել են արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով մասնակիցներ «ՄԻԿԱՆ» ՍՊԸ-ն և «Ռիջիդ» ՍՊԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակից «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամը սահմանված ժամկետում շտկման վերաբերյալ փաստաթղթեր չի ներկայացրել:

Հանձնաժողովի որոշումը

Հիմք ընդունելով ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով հրավերի 8.9 և 8.10 կետերը, ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված (այդ թվում շտկմամբ) փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի հայտը մերժել:
2. ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՄԻԿԱՆ» ՍՊԸ-ին:
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «ՄԻԿԱՆ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

անդամներ	_____	Ս. Նազարյան
	_____	Ն. Ավետյան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան